ՋԱՏԿԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

Մոսկվայի և համայն Ռուսիո ԿԻՐԻԼ Պատրիարքի

Ռուս Ուղղափառ Եկեղեցու հովվապետներին, հովիվներին, սարկավագներին, վանականներին և հավատավոր բոլոր զավակներին

Սրբազա՛ն հովվապետներ, արժանապատի՛վ հովիվներ և սարկավագներ,
ամենապատվակա՛ն վանականներ և միանձնուհիներ,
թանկագի՛ն եղբայրներ և քույրեր,

ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՅԱ՛Վ:

Դիմելով ձեզ կենսահաստատ այս ողջույնով՝ սրտանց շնորհավորում եմ ձեզ բոլորիդ Զատկի մեծ և աշխարհակեցուցիչ տոնի առթիվ: *Անվանյալ և սուրբ այս օրը* մենք լցվում ենք հոգևոր այնպիսի ուրախությամբ և մեծագույն երախտագիտությամբ առ Աստված, այնքան ակնհայտորեն զգում ենք մարդու հանդեպ Արարչի սիրո ուժն ու խորությունը, որ երբեմն մեր զգացմունքներն արտահայտելու համար դժվար է գտնել այլ խոսքեր, քան այն, որոնցով յուղաբեր կանայք ընթացան առաքյալների մոտ, որպեսզի նրանց ազդարարեն հրաշալի իրադարձության մասին, որ իրենք տեսել են Տիրոջը:

Կարելի է միայն պատկերացնել, որքան դյուրին չէր Փրկչի աշակերտներին հավատալ կատարված Հարության իրականությանը: Չէ որ դեռ ոչ այնքան վաղուց նրանք սեփական աչքերով տեսել էին, թե ինչպես էին չարչարում և խաչում իրենց սիրեցյալ Վարդապետին: Դեռ թարմ էին հիշողությունները, թե ինչպես էին Նրա մեռած և անշունչ Մարմինը դնում գերեզմանում ու ծանր վեմով կնքում սառը քարայրը: Եվ ահա վիշտը փոխարինվում է հավատքի հաստատությամբ և կյանքի հաղթանակով, իսկ տխրության արցունքները վերածվում են ուրախության արցունքների:

Հարուցյալ Քրիստոսի հետ ունեցած իրական հաղորդության փորձառությունը և զատկական անմար ուրախությունը թևավորել և ներշնչել էին առաքյալներին, որոնք գնում էին մինչև երկրի եզերքները, որպեսզի քարոզեն մեղքերի թողություն և փրկություն, որը մենք ընդունեցինք գերեզմանից հառնած Տեր Հիսուսի միջոցով:

Չվախենալով դժբախտություններից ու դաժան հալածանքներից՝ համբերելով աղետների և չար պատահարների, առաքյալներն անլուռ և համարձակ կերպով վկայում էին Քրիստոսի՝ մահը Հաղթողի մասին:

Եվ ահա Եկեղեցին արդեն երկու հազարամյակ ապրում է Հարության մասին այս լուրով և ձգտում է հաղորդակից դարձնել նրան *ամեն մարդու, որ գալիս է աշխարհ* (Հովհ. 1,9): Զատկի լույսի ներքո իրոք ամեն ինչ երևում է այլ կերպ, անհայտանում է վշտերից, տրտմությունից և կենցաղային անկարգություններից ծնված վախն ու անելանելիության զգացմունքը: Եվ նույնիսկ ներկա տագնապալի ժամանակների բարդ հանգամանքները կորցնում են իրենց չարագույժ սրությունը մեզ շնորհված հավիտենության հեռանկարում:

Հարուցյալ Փրկչի մասին վկայելու համար ամենևին էլ պարտադիր չէ գնալ կամ ուղևորվել ինչ-որ հեռու տեղ առաքյալների նման, որոնք ամբողջ աշխարհով տարածեցին զատկական ավետիսը: Մեր շուրջը կան ոչ սակավ մարդիկ, ովքեր *սիրով գործող* քրիստոնեական *հավատքի* (Գաղ. 5, 6) կենդանի օրինակի կարիք ունեն: Աստված մեր ուժերից վեր ճգնանքներ չի պահանջում մեզանից: Նա միայն խնդրում է մեզ միմյանց նկատմամբ սեր ցուցաբերել, հիշել, որ այդպես սեր ենք դրսևորում նաև Նրա հանդեպ: Բարի ժպիտը, ուշադրությունն ու նրբազգացությունը մեր կողքին եղողների հանդեպ, ժամանակին ասված մխիթարության և աջակցության խոսքերը երբեմն կարող են դառնալ ամենակարևոր գործերը, որոնք մենք հնարավորություն ունենք կատարելու հանուն Հարուցյալ Քրիստոսի:

Եվ այսօր, երբ աշխարհը ծվատում են ընդհարումներն ու հակասությունները, իսկ բազում մարդկանց սրտերում բուն է դրել ատելությունը, վախն ու թշնամությունը, հատկապես կարևոր է չմոռանալ քրիստոնեական մեր կոչման մասին և իսկական սեր դրսևորել մերձավորների հանդեպ, որով միայն և բժշկվում են չարի և անիրավության կողմից հասցված վերքերը: Մենք չպետք է ենթարկվենք մարդկային ցեղի թշնամու փորձությանը, ով ձգտում է քանդել օրհնյալ միությունն ուղղափառ քրիստոնեաների միջև: Ջերմորեն աղաչում եմ մահը Հաղթող Տեր Հիսուսին և ձեզ նույնպես խնդրում եմ վերընծայել Նրան կրկնապատիկ աղոթքներ, որպեսզի բոլոր անջրպետները հաղթահարվեն, վերահաստատվի կայուն խաղաղությունը, իսկ բաժանումների վերքերը բժշկվեն Աստվածային շնորհով:

Շնորհավորելով բոլորիդ Զատկի տոնի առթիվ՝ Հարուցյալ Քրիստոսի օրհնությունն եմ հայցում ձեզ վրա և մաղթում եմ ձեզ, թանկագիննե՛ր, զատկական լուսավոր անսպառ բերկրանք, որ ամրացնում է մեզ հավատի, հույսի և սիրո մեջ: Տա

Աստված, որպեսզի այս լույսը երբեք չմարի մեր սրտերում, որպեսզի *այն միշտ լույս տա աշխարհին* (Մատթ. 5,14): Իսկ մենք, անդուլորեն լուսավորվելով Աստծո խոսքով՝ Ավետարան կարդալով, և հաղորդակից դառնալով Աստվածային շնորհին՝ մասնակցելով Եկեղեցու Խորհուրդներին, անշեղորեն աճենք Տիրոջ ճանաչողության մեջ և հաստատվենք Նրա պատվիրանները կատարելու մեջ, որպեսզի *մարդիկ տեսնելով մեր բարի գործերի լույսը, փառավորեն մեր Երկնավոր Հորը* (Մատթ. 5,16) և մեզ հետ միասին ուրախությամբ վկայեն, որ

ՃՇՄԱՐՏԱՊԵՍ ՀԱՐՅԱՎ ՔՐԻՍՏՈՍ:

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ

Սուրբ Զատիկ
2022 թ.